Հաշվետվություն
«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում «Աուտիզմ ազգային հիմնադրամի» կողմից «Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայությունների» շրջանակներում իրականացվող միջոցառումներիվերաբերյալ
(2020 թվականի առաջին կիսամյակ)

- **1.Աուտիզմ ունեցող երեխաների կրթության առանձնահատուկպայմանների կարիքների գնահատում և անհատական ծրագրի կազմում, այդ թվում՝ վարքի փոփոխման նպատակով շրջակա միջավայրի իրադարձությունների մոդիֆիկացում և ադապտացիա:**

2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կենտրոնը ծառայություններ է մատուցել 0-14 և 14 և բարձր տարիքային խմբերի մեջ ընդգրկված 200 շահառուների:

Երկրորդ եռամսյակում հեռավար ծրագիրը իրականացվել է 83 շահառուների հետ:



Ստորև կներակայացնենք 2020 թվականի առաջին կիսամյակում հեռավար ձևաչափով իրականացված ծրագրերը և կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը, ինչպես նաև <u>հեռավար ձևաչափով ծառայությունների տրամադրման առավելությունների և խոչընդոտների ամփոփ վերլուծությունը:</u>

Հեռավար ուսուցման ընթացում առկա խոչընդոտներ՝

1. Հեռավար ծառայություններին ներգրավման դժվարություն:
   Չնայած այն հանգամանքին, որ առաջարկվող ծառայությունները հասանելի են եղել բոլոր շահառուներին, շահառուների մոտ 20 %-ը չի կարողացել հետադարձ կապ ապահովել մասնագետների հետ՝ ծնողների զբաղվածության, սաների արարողակարգային վարքերով և հեռավար կրթության հանդեպ նվազ հետաքրքրություններով պայմանավորված:
2. Հեռավար ուսուցումը և մեկուսացումը տնային պայմաններում, առցանց և սահմանափակ շփումը մասնագետների հետ բացասաբար է անդադարձել որոշ երեխաների վարքի վրա՝ հաճախակի են դարձել զգայական ստիմուլյացիաները, շատացել են խուսափման դեպքերը
3. Երեխաների մեծամասնությունը հազվադեպ և մեծ դժվարությամբ են կենտրոնանում առցանց ուսուցման ընթացքում
4. Կապի միջոցները երեխայի համար ասոցացվում են զվարճանքի հետ, այլ ոչ որպես ուսուցման միջոց
5. Շփման սահմանափակում/ հասակակիցների հետ շփման բացակայություն
6. Ֆիզիկական ակտիվության սահմանափակում
7. Ծնողի մոտ ուսուցողական նյութի բացակայություն/սահմանափակ քանակ

Հեռավար ուսուցման առավելություններից են՝

1. Շարունակական մշտադիտարկումների և մասնագիտական աջակցության շնորհիվ ծնողները այժմ կարողանում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաների խնդրահարույց վարքերի պատճառաբանությունը և ճիշտ հակազդման միջոցներ կիրառել:
2. Ծնողները մասնագետների ուղորդմամբ սովորեցին ճիշտ վիզուալիզացիաներ ստեղծել իրենց երեխաների համար ինչը նույնպես կարևոր դեր է խաղում հետևողական աշխատանքի կազմակերպման և իրականացման համար, ինչպես նաև երեխաների համար կանխատեսելի դարձնել առօրյան և ցանկացած փոփոխությունները, որը տեղի են ունենում օրվա ընթացքում:
3. Ծնողները սկսեցին ակտիվորեն պատրաստել աշխատանքային նյութեր և կազմակերպել երեխայի անհատական աշխատանքը տանը ըստ մասնագետի ցուցումների:

Հեռավար ուսուցման ընթացքում, յուրաքանչյուր եռամսյակում իրականացվել է երեխաների վարքերի դիտարկում և կազմվել է գիտելիքների և հմտությունների գնահատման համար նախատեսված էլեկտրոնային հարցաշար:

Վարքի նկարագիրը/վերլուծությունը տրված է՝

83 responses



Հեռավար թերապիան իրականացվել է՝

83 responses



Ներկայացնում ենք առաջին կիսամյակում հեռավար հարթակում «Կիրառական Վարքային Վերլուծություն» (ABA) և «Վերբալ վարքի միջամտություն» ծրագրերի շրջանակներում իրականացվող հետևյալ հիմնական դրույթները, որոնց շուրջ տարվում են շարունակական աշխատանքներ յուրաքանչյուր շահառուի հետ՝ առաջնորդվելով իր անհատական ակադեմիական ծրագրով:

1) Դիմելու հմտություններ/Mand-ը/Խոսքային կամ ժեստային մի շատ կարևոր օպերանտ է, որի միջոցով շահառուին սովորեցվում է արտահայտել իր պահանջները, խնդրանքը կամ հարցադրումը:

2) Տակտ (կոնտակտ) / Tact. Սովորեցվում է մտնել կոնտակտի, շփման մեջ շրջակա միջավայրի հետ իրեն զգայարաններից որևէ մեկի միջոցով:

3) Ունկնդրի հմտություններ/Listener skills (բառերի և հրահանգների ընկալում և կատարում)/ «Ռեցեպտիվ Խոսքը» ներառում է այլ մարդկանց խնդրանքներին արձագանքելը:

4) Տեսողական ընկալման հմտություններ և համադրում/ Visual perceptual skills and matching-to-sample (VP-MTS). Երեխաներին սովորեցնում ենք համադրել նույն կամ նման առարկաները, նյութերը

5) Նմանակում/ Imitation. Նմանակումը մեկ այլ հմտություն է, որը նպաստում է վերբալ վարքի ձևավորմանը: Իմիտացիան, ընդհանուր առմամբ, ներառում է այլ անձի շարժումների պատճենահանում:

6) Ինքնուրույն խաղ/Independent play skills (Խաղ ինքն իր հետ)/ Երեխայի մոտ զարգացնում ենք ինքնուրույն խաղալու ընդունակությունը:

7) Սոցիալական վարք և սոցիալական խաղ/Social behavior and social play(խաղ և հաղորդակցություն ուրիշների հետ)/ Երեխայի մոտ զարգացնում ենք խաղը մեծահասակների և իրեն հասակակիցների հետ:
8) Մոտորիկայի նմանակում /Motor imitation /Նպաստում է ապագայում ժեստերի լեզվին տիրապետելուն
9) Էքոիկ/Echoic (խոսակիցը կրկնում է այն, ինչ լսում է). Երեխային սովորեցնում ենք ասել «մամա», « պապա » և այլն
10) Ինքնաբուխ խոսք/Spontaneous vocal behavior. Զարգացնում ենք երեխայի ինքնաբուխ խոսքը
11) Գործառույթների ուսուցում/ Listener responding by function, feature, and class, or LRFFC. Սովորեցնում ենք դասակարգել տարբեր առարկաներ՝ ըստ կիրառության, իմանալ դրանց գործածության ձևերը
12) Զրույց/ Intraverbal. Այս բաժնում օգտագործվող վարժությունները երեխային սովորեցնում են հասկանալ զրուցակցի խոսքը, տալ հարցեր և պատասխանել զրուցակցի հարցերին:
13) Դասարանային և խմբային գործունեության հմտություններ/ Classroom routine and group skills. Այստեղ երեխային սովորեցնում ենք հետևել ընկերներին, խմբային աշխատանքներին և ուսուցչի հրահանգներին
14) Լեզվային համակարգ/Linguistic structure. Սովորում ենք բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, պատմվածքներ և այլն
15) Գրելու հմտություններ/Writing skills. Սովորում ենք գրել տառեր, բառեր, նախադասություններ և այլն
16) Մաթեմատիկական հմտություններ/Math. Սովորում ենք երկրաչափական պատկերները, թվերը, դրանց գրության ձևերը, մաթեմատիկական տարբեր գործողություններ՝ կախված շահառուի տարիքային առանձնահատկություններից:

Հեռավար ծառայությունների տրամադրման ընթացքում վարքային աջակցություն է կազմակերպվել մասնագետների կողմից ըստ երեխայի անհատական կրթական ծրագրի, կիրառվել են կանխարգելիչ միջամտություններ, խրախուսական համակարգերի կիրառում, պատկերային աջակցություն, տեսաձայնագրությունների և պատկերային դասացուցակների կիրառում:

Հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և հիմք ընդունելով անհատական ծրագրերը մասնագետների կողմից հեռավար տրվում են հստակ հանձնարարություններ, որոնք այս ընթացքում մասնագետներիի օգնությամբ իրականացվում են ծնողների կողմից: Հանձնարարությունների կատարման ընթացքը հնարավորինս վերահսկվում է տեսազանգերի միջոցով:

•Կատարելով երեխաների վարքի առցանց դիտարկումներ՝ մասնագետները որոշակի ցուցումներ և խորհուրդներ են տալիս երեխայի այս կամ այն վարքի վերաբերյալ, օգնելով ծնողներին ավելի ճիշտ դրական մոտեցում ցուցաբերել երեխայի կողմից դրսևորվող ոչ ադապտիվ վարքերին:

Որոշակի ժամանակահատվածում առցանց դիտարկելով երեխայի վարքը մշակվում է ոչ ադապտիվ վարքերի նվազման, փախարինման և կանխարգելման ռազմավարություններ:

•Հեռավար ուսուցումը շարունակվում է նաև մասնագետների կողմից պատրաստած ուսուցողական տեսահոլովակների միջոցով:

Աշխատանքի օրինակները հետևյալ հղումներով՝

https://www.facebook.com/myway.armenia/videos/714739342660074
https://www.facebook.com/myway.armenia/photos/pcb.720115435451887/720114798785284/
https://www.facebook.com/imughi/videos/2748060158805538
https://www.facebook.com/imughi/videos/263128331407840
https://www.facebook.com/myway.armenia/photos/pcb.720115435451887/720114628785301/
https://www.facebook.com/myway.armenia/photos/pcb.711286029668161/711285569668207/
https://www.facebook.com/myway.armenia/photos/pcb.711286029668161/711285213001576
https://www.facebook.com/myway.armenia/photos/pcb.720115435451887/720114698785294
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1621721204644844/1621718111311820
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1614028595414105/1614017462081885/
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1609095909240707/1609095729240725

Աղյուսակում տրված են առցանց հանդիպումների տվյալները: Այնուամենայնիվ այլընտրանքային թերապիայից օգտվել են բոլոր շահառուները ստանալով առաջադրանքներ տեսանյութերի միջոցով

Հեռավար ուսուցման ընթացքում երեխան ստացել է հետևյալ այլընտրանքային թերապիաները՝

83 responses



2. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում

2.1 Խոսքի ընկալունակության և զարգացման վաղ միջամտությունը աուտիզմ համախտանիշ ունեցող երեխաների մոտ

Մասնագետների կողմից իրականացվել են անհատական տեսազանգեր, խորհրդատվություն ծնողին, վերապատրաստումներ ինչպես նաև պատրաստվել և շահառուներին են ներկայացվել ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքով ձևավորված առաջադրանքներ՝ ուղղված սաների գրավոր և բանավոր խոսքի և հաղորդակցման հմտությունների զարգացմանը՝ կիրառելով գիտականորեն և գործնականորեն հաստատված մեթոդներ և տեխնիկաներ:

Այս կիսամյակի ընթացքում մասնագետների կողմից առանձնացվել են այն առաջնային և հիմնական խնդիրները, որոնք կարիք ունեն շարունակական և անխափան միջամտության:

- էխոլալիա
- Ձայնային ինքնախթանում
- Խոսքային շնչառության խանգարում
- Կապակցված խոսքի թերզարգացում
- Բառի վանկային կառուցվածքի ոչ ճիշտ պատկերացում
- Արտաբերական ապարատի մկանային լարվածություն
- Խոսքի տեմպո-ռիթմիկ կողմի խանգարում
- Առանձին հնչյունախմբերի խանգարում
- Երկխոսության բացակայություն
- Կապակցված խոսքի բացակայություն
- Արտաբերական ապարատի մկանային տոնուսի թուլություն

Հեռավար ուսուցման ընթացքում հիմնական աշխատանքը տարվել է վերը նշված խնդիրների հաղթահարման ուղղությամբ

1.Մայրիկներին տրվել են գործնական ցուցումներ
2.Տրվել են տեսագրություններ՝ աշխատանքը ճիշտ կազմակերպելու նպատակով, պատրաստվել և ցուցադրվել են դիդակտիկ նյութեր:
3.Հեռավար կապի միջոցով ապահովվել է ծնող-երեխա-մասնագետ եռակողմ կապը:

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ

1.Շնչառական վարժությունների միջոցով փորձել կարգավորել խոսքային շնչառությունը/երկարաձգել արտաշունչը/:
2.Արտաբերական վարժությունների օգնությամբ կարգավորել սուլական, շչական և քմային հնչյունների ճիշտ արտաբերումը:
3.Ձայնային վարժությունների օգնությամբ հնարավորինս կարգավորել խոսքի տեմպո-ռիթմիկ կողմի խանգարումները:
4.Ամրապնդել առարկա-գործողություն կապը /լոգոպեդական քարտերի, սյուժետադերային նկարների և այլն/միջոցով:
5.Ձայնային վարժությունների օգնությամբ փորձել ստանալ ձայնավոր հնչյուններ:
6.Հեքիաթների, կարճ պատմվածքների, ստվերային թատրոնի և այլն, զարգացնել կապակցված խոսքը/խաչաձև հարցեր/:
7.Քարտերի, սյուժետադերային նկարների, խաղերի օգնությամբ տանել աշխատանք կապակցված խոսքի զարգացման ուղղությամբ:

Ծնողների հետ քննարկվել են իրականցվող աշխատանքները, նպատակները, տրվել են մի շարք հանձնարարականներ, որոնք ծնողները պետք է կատարեն տանը, առօրյա-կենցաղային իրավիճակներում: Կազմվել է հստակ ժամանակացույց թէ ինչ հաճախականությամբ պետք է յուրաքանչյուր ծնող այցելի լոգոպեդին, որքանով են հաղթահարվել դրված նպատակները, դրական առաջընթացի դեպքում նպատակների փոփոխում:

Արդյունքում շատ կարևոր է խորհրդատվության իրականացումը, քանի որ աշխատանքի արդյունավետության մեծ մասը կախված է կատարված աշխատանքների ամրապնդումից, որը պետք է իրականացնի ծնողը տանը: Տարվող աշխատանքները ծնողների հետ, ծնողների ներգրավվածությունը և միաժամանակ երեխաների խոսքի գնահատումը ցույց տվեցին, որ

ծնողի և մասնագետի համագործակցությունը հաջողության գրավականն է: Այս աշխատանքները շարունակական են և անգնահատելի յուրաքանչյուր խոսքի զարգացման գործընթացում:
Ծնողների հետ համագործակցության օրինակը հետևյալ հղումով՝
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1614617972021834/1614606778689620/

2.2. Երաժշտությունը որպես աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների ինքնարտահայտման, ոչ խոսքային հաղորդակցման և հույզերի դրսևորման միջոց:
Առաջին կիսամյակում երաժշտական թերապիան իրականացվել է հեռավար հարթակում տարբեր եղանակներով: Տեսազանգերի միջոցով կազմակերվել է նաև սաների կողմից համատեղ կատարումներ:
Այս կիսամյակի ընթացքում մասնագետների կողմից առանձնացվել են հետևյալ կարևոր խնդիրները, որոնք կարիք ունեն շարունակական միջամտության:

- Շարժողական ֆունկցիաների խթանում,
- Շտկում և զարգացնում է զգայական ֆունկցիաներն ու հնարավորությունները,
- Խոսքի զարգացման խթանում,
- Խոսքի տեմպի, ռիթմի, շեշտադրության և տեմբրի կարգավորում

Օրինակները հետևյալ հղումներով՝
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1623430827807215/1623429217807376/
https://www.facebook.com/imughi/videos/1565483490294111
https://www.facebook.com/imughi/videos/2844724758971895

2.4. Արտթերապիայի հիմնական դրույթների կիրառումը աուտիզմ համախտանիշ ունեցող երեխաների համար

Անհատական ծրագրի նպատակադրումները հիմնվում են երեխայի զգայական (հոտառության, շոշափման և հպման արձագանքը) իքնախթանիչ և կրկնվող վարքային դրսևորումների վրա:
Հիմնական նպատակադրումներ՝

1. Զարգացնել ուշադրության կայունությունն ու կենտրոնացվածությունը (նկարչական գործընթացում ֆորմաների ընդօրինակումը, գծերի և պարզագույն ստերեոտիպային ձևերի ստեղծումը),
2. Երեխայի մոտ ստեղծել հուզական դրսևորումների դրական վիճակ՝ ընտրելով համապատասխան արտթերապևտիկ տեխնիկաներ (հույզերի քաոտիկ արտահայտում՝ ներկեր ցփնելը, վրձնով հարվածները, ներկ քսելը),
3. Արտթերապևտիկ տեխնիկաների միջոցով նպաստել ագրեսիայի կառավարմանը, հոգեհուզական բացասական դրսևորումների հաղթահարմանն ու կարգավորմանը (ստեղծագործական ինքնաարտահայտման թերապիա՝ «ՍԻԹ» մեթոդ),
4. Բարձրացնել աշխատունակության մակարդակը:

Ամփոփում
Արտթերապևտիկ աշխատանքում դիտարկվում է ուշադրության կենտրոնացման դժվարություններ: Ստեղծագործական գործընթացի ողջ ընթացքում նկատվել է

աշխատունակության ցածր մակարդակ: Արտթերապևտիկ տեխնիկաները նպաստում են հոգեհուզական բացասական դրսևորումների կարգավորմանը:
Կիրառվել են արտթերապևտիկ հետևյալ վարժությունները և տեխնիկաները.
• «Զգայական նկարչություն» նկարչական տեխնիկա
• «Գունավոր բաժակներ» նկարչական վարժություններ
• «Տաք և սառը» աշխատանք կինետիկ ավազով
• «Ավազանկարչություն» զարգացնող, թերապևտիկ աշխատանք ավազով
Ամփոփում.
Հոտառության, շոշափման և հպման արձագանքի թեթև աստիճանի դժվարություններ. «Զգայական նկարչություն» նկարչական տեխնիկա, «Տաք և սառը» աշխատանք կինետիկ ավազով. Մեծահասակի հետ համատեղ աշխատելու դեպքում գրանցվում է թեթև աստիճանի դժվարություններ. երեխան ներգրավված է աշխատանքի գործընթացին, կատարում է տեխնիկաների համար անհրաժեշտ հրահանգները , միևնույն ժամանակ ստեղծագործական նյութերը՝ ջրաներկ, գուաշ, վրձիններ, ավազ համառորեն շարունակում է դնել բերանը, ժամանակ առ ժամանակ կարող է հոտ քաշել , համտեսել, հպել դնչին : Երեխան կարող է անտեսել կամ բուռն արձագանքել առարկայից ստացված զգայական հատկությունից:

• Հոտառության, շոշափման և հպման արձագանքի միջին աստիճանի դժվարություններ. «Գունավոր բաժակներ» նկարչական վարժություններ, «Տաք և սառը» աշխատանք կինետիկ ավազով. Ինքնուրույն առանց մեծահասակի ուղղորդման երեխան ավելի շատ հետաքրքրված է ստեղծագործական նյութերը համտեսելու, շոշափելու և հոտ քաշելու անհագ և անդադար կրկնելու ցանկությամբ քան ըստ նշանակության ուսումնասիրմամբ և օգտագործմամաբ : Հեռավար աշխատանքի դեպքում պահպանել ենք նորի հանդեպ աստիճանականության սկզբունքը խուսափելու համար անցանկալի վարքային դրսևորումներից և փոքրիկ չափաբաժնով մատուցել ամեն մի նոր տեխնիկան հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխան տվյալ տեխնիկաները իրականցնելու է տան պայմաններում:
Արտթերապևտիկ հեռավար աշխատանքը շարունակվում է :
Աշխատանքի օրինակները հետևյալ հղումներով՝

https://www.facebook.com/myway.armenia/videos/2574022169515728
https://www.facebook.com/imughi/videos/836707936857563
https://www.facebook.com/imughi/videos/697776071047728
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1638572536293044/1638571572959807
https://www.facebook.com/imughi/videos/277822079892430
https://www.facebook.com/imughi/videos/277822079892430
https://www.facebook.com/myway.armenia/videos/637626593697213/

2.5. Ինքնասպասարկման, ինքնակառավարման և պատշաճ միջանձնային հարբերություններ հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում:

Օկուպացիոն թերապիայի հիմնական նպատակն է սովորոցնել երեխային ինքնուրույն կենցաղավարություն, հնարավորինս ինքնուրույն ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են տվյալ երեխայի համար և իմաստ են հաղորդում նրա կյանքին: Այն իր մեջ ներառում է՝
1. Զգայական ինտեգրում
2. Զբաղվածություններ
3.Կենցաղային հմտությունների ձեռքբերում. ինքնախնամք, գնումներ խանութից, ուտեստների պատրաստում

4. Ժամանց. պար, ռիթմիկա
5. Աշխատանքային հմտությունների ձեռքբերում
6. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա
Առաջին կիսամյակում մասնագետները իրականացրել են տեսազանգեր, կազմել են սահիկաշարեր, խաղ-հարցումներ quizziz հարթակում, պատրաստել և մոդելավորել են ուսուցողական տեսանյութեր: Էրգոթերապիստների մասնակցությամբ կազմակերպվել են նաև դասընթացներ ծնողների համար: Ֆիզիկական կուլտուրայի մասնագետները իրականացրել են ինչպես համաժամանակյա այնպես էլ տեսանյութերի միջոցով հեռավար պարապմունքներ:

Կարևոր է՝
1.Զարգացնել մանր և խոշոր շարժողական հմտությունները,
2.Ապահովել երեխաների մասնակցությունը տարբեր զգայական խաղերի մեջ,
3.Երեխաներին ներգրավվել առօրյա կենցաղային գործողությունների մեջ,
4.Սովորեցնել երեխաներին օգտվել սանհանգույցից (երեխան հրաժարվում է մտնել լոգասենյակ, բնական կարիքները հոգում է գիշերանոթի մեջ, բնակարանի ցանկացած հատվածում),
5.Ներգրավել զգայական խաղերի մեջ, որոնք կապված են շոշափական, լսողական, **պրոպրիոցետիվ** եւ վեստիբուլյար համակարգերի գործունեության հետ,
6.Երեխայի աննպատակ, չուղորդված ակտիվությունը վերափոխել ֆիզիկական ակտիվության՝ առարկանները վազքով տեղափոխել մի կետից մյուսը եւ նետել զամբյուղի մեջ, կատարել կքանիստ, տեղում ցատկ,
Մայրիկներին տրվել են գործնական ցուցումներ, առաջարկվել են տեսահոլովակներ, գործնական պարապմունքների կազմակերպման վերաբերյալ:
Աշխատանքի օրինակները հետևյալ հղումներով՝
https://www.facebook.com/myway.armenia/videos/877130499460768
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1621712084645756/1621708501312781/
https://www.facebook.com/imughi/videos/542672926436129

5. Խորհրդատվությունների և դասընթացների կազմակերպում ու անցկացում աուտիզմ ունեցող երեխաների ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների համար

Կենտրոնը իրականացնում է շարունակական վերապատրաստումներ, խորհրդատվություններ և գործնական աշխատանքներ ծնողների և մասնագետների համար:
Մասնագիտական վերապատրաստումներ են իրականացվել ծրագրերի ղեկավարների կողմից

1. Հեռավար կրթության կազմակերպում
2. Կիրառական վարքային վերլուծության մեթոդաբանություն (ABA)
3. Վարքի գործառույթների գնահատում
4. Զգայական ինտեգրացիա

Սեմինարների մասին հետևյալ հղումով՝
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1574048762745422/1574009939415971

Սեմինարներ ծնողների համար. Տեղի է ունեցել 2 հանդիպում:
Թեմա՝ «Սթրեսային վիճակի, սթրեսակայունության գնահատում արտթերապևտիկ թեստերի միջոցով»

https://www.facebook.com/myway.armenia/photos/gm.1605959649559170/693600824770015/?type=3
https://www.facebook.com/myway.armenia/photos/pcb.694547088008722/694543348009096/

Էլեկտրոնային նյութերի բազայի ստեղծում:

Հեռավար ծառայություններ իրականացնելու նպատակով մոտ 50-ից ավել սոցիալական պատմություններ են ստեղծվել, թարգմանվել և ադապտացվել, բազմաթիվ կրթական, ուսուցողակ նյութեր են պատրաստվել և հանրայնացվել կենտրոնի մասնագիտական թիմի կողմից:
Վարքի գործառույթները՝ ուղեցույց ծնողների համար
https://www.facebook.com/narinev1/videos/3034207399958741
Ուսումնական տեսանյութեր՝
https://www.facebook.com/imughi/videos/291506158666385
https://www.facebook.com/imughi/videos/982455622183378
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1567484206735211/1638747769608854/
https://www.facebook.com/imughi/videos/216845919590405
https://www.facebook.com/narinev1/videos/3004961776216637

Խաղեր
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1636725323144432/1636724903144474/
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1630916997058598/1630916663725298/
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1630916997058598/1630916667058631/
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1624495214367443/1624486931034938/
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1617602498390048/1617659225051042
https://www.facebook.com/imughi/photos/pcb.1615910728559225/1617685211715110
https://www.facebook.com/imughi/videos/2688546128055905
https://www.facebook.com/imughi/videos/589043068647533